ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
N ԳՀԾՁԲ-21-10/2-4 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան «26» Ապրիլի 2021թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Ա.Սահակյանի, ով գործում է ՀՀ պաշտպանության նախարարության կանոնադրության հիման վրա, (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և Ա/Ձ «Ռազմիկ Հովհաննիսյան»-ը, ով գործում է որպես անհատ ձեռնարկատեր (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, երկուսը միասին՝ Կողմեր, հիմք ընդունելով **19.02.2021թ.** կնքված N **ԳՀԾՁԲ-21-10/2-4** գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.15 կետը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կողմերը, հիմք ընդունելով համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու փաստը (ֆինանսական միջոցները նախատեսվել են ՀՀ կառավարության 30.12.2020թ. N 2215-Ն որոշմամբ, Ծանուցում N 7-ՊՆ 06.03.2021թ), փոխադարձ համաձայնությամբ որոշեցին կնքել սույն Համաձայնագիրը՝ սահմանելով **պոմպերի և էլեկտրական շարժիչների վերանորոգման և պահպանման ծառայությունների** (այսուհետ՝ Ծառայություն) գնման և վճարման ժամանակացույցեր՝ համաձայն N 1 և N 2 Հավելվածների:

1.2 Կատարողը պարտավորվում է Պատվիրատուի հանձնարարությամբ մատուցել Պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված տեխնիկական բնութագրի պահանջներին համապատասխան Ծառայություն՝ Համաձայնագրի N 1 Հավելվածով սահմանված գնման ժամանակացույցով նախատեսված ծավալներով և ժամկետներում, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել այդ Ծառայությունը և վճարել դրա համար՝ Համաձայնագրի N 2 Հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված չափերով և ժամկետներում:

2. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

2.1 Համաձայնագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության **առավելագույն** գինը կազմում է **15 000 000 (տասնհինգ միլիոն) ՀՀ դրամ:**

Ընդ որում 1-ին չափաբաժնի մասով մատուցման ենթակա ծառայության **առավելագույն** գինը կազմում է **5 000 000 (հինգ միլիոն)** ՀՀ դրամ, 2-րդ չափաբաժնի մասով մատուցման ենթակա ծառայության **առավելագույն** գինը կազմում է **10 000 000 (տասը միլիոն)** ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները: Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

2.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա, այն ստորագրվելուց հետո 15 բանկային օրվա ընթացքում՝ Համաձայանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և եռամսյակներում, բայց ոչ ուշ, քան մինչև 24.12.2021թ.:

3. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

3.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի սույն Համաձայնագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

3.2 Համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով նախատեսված մյուս դրույթները թողնվում են անփոփոխ:

3.3 Համաձայնագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն Համաձայնագրի անբաժանելի մասը:

3.4 Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, կազմված է 2 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Համաձայնագրի N 1 և N 2 Հավելվածները հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է Համաձայնագրի մեկ օրինակ:

3.5 Համաձայնագրով նախատեսված ծառայությունների դեպքում պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ՊՆ ԿՇ և ԱԲ վարչությունը:

4. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«Ռազմիկ Հովհաննիսյան» Ա/Ձ
ք. Երևան, Բագրևանդի 5	Արմավիրի մ. գ.Լեռնագոգ, Խաչատրյան փ. 68
ՀՀ ՖՆԱ գործառնական վարչություն	«Ինեկոբանկ» ՓԲԸ, Արմավիր մ/ճ
Հ/Հ 900011144079	Հ/Հ 2050332094901001
ՀՎՀՀ 02522157	ՀՎՀՀ 80519812
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ	
Ա.ՍԱՀԱԿՅԱՆ	Ռ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Հավելված N 1
N ԳՀՇՁԲ-21-10/2-4 պայմանագրի
N 1 Համաձայնագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ծառայության					
Հ/հ	CPV կոդ	Անվանումը	չափման միավորը	Առավելագույն գինը/ՀՀ դրամ	մատուցման ժամկետը
1	50511100/501	Պոմպերի վերանորոգման և պահպանման ծառայություններ	Դրամ	5 000 000	ՊՆ ԿՇ և ԱԲ վարչության հայտերի հիման վրա՝ 2-4-րդ եռամսյակներ, բայց ոչ ուշ քան 15.12.2021թ.
2	50531210/504	էլեկտրական շարժիչների վերանորոգման և պահպանման ծառայություններ	Դրամ	10 000 000	ՊՆ ԿՇ և ԱԲ վարչության հայտերի հիման վրա՝ 2-4-րդ եռամսյակներ, բայց ոչ ուշ քան 15.12.2021թ.

• Պոմպերի և էլեկտրական շարժիչների տեղափոխումը զորամասից նորոգող կազմակերպություն և հետ զորամաս կատարվում է ՀՀ ՊՆ միջոցներով և հաշվին:

Հավելված N 2
N ԳՀՇՁԲ-21-10/2-4 պայմանագրի
N 1 Համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության					
Հ/հ	CPV կոդ	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ.-ին՝ ըստ եռամսյակների, այդ թվում՝		
			2-րդ եռամսյակ	3-րդ եռամսյակ	4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ, քան 24.12.2021թ.
1	50511100/501	Պոմպերի վերանորոգման և պահպանման ծառայություններ	1 500 000	3 000 000	5 000 000
2	50531210/504	էլեկտրական շարժիչների վերանորոգման և պահպանման ծառայություններ	3 000 000	6 000 000	10 000 000

**Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարության

ԿԱՏԱՐՈՂ

«Ռազմիկ Հովհաննիսյան» Ա/Ձ

Ռ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ